

27

Гуныгуу и Гуныгуу

Гуны-Гуны

1914



385

ՅԱԹՆԵՐ

Գ Ո Ւ Լ Գ Ն
ԵՒ
Չ Ն Ն Գ Ր Ն



Թարգմ. Անգլերենից

Ե. Վ. ԵՐԵՄՐԱԿԵՑԵԱՆ.



Տպարան Ս. Ամենափրկիչ Վանուց
Նոր—Ջուղա

1 9 1 4

1902

8-93
9-86

ՀՆԴԿՈՒԿԱՆ ՀԵՔՇՈՒԹՆԵՐ

8-93
9-86

ԳՈՒԼԳՍ ԵՒ ՉԱՆԳՐԱԿ



Թարգմ. Անգլերենից

Ե. Վ. ԵՐԿԱՐԱԿԵՑԵԱՆ



Տպարան Ս. Ամենափրկիչ Վանքի
նոր-Ջուղա

1914

982003

Ի
ՅԿ
ԲԱ

8769
6978
2

ՀՆԴԿԱԿԱՆ ՀԷՔԵՍՌՆԵՐ

ԳՈՒԼԳԱՆ ԵՒ ՉԱՆԴՐԱՆ

Ժամանակով կային երկու փոքրիկ իշխանուհիներ, որոնց խորթ մայրը շատ անգլխութեամբ էր վարուում իրենց հետ: Իրենց Ռաջա հայրն էլ զբաղուած լինելով իր պետութեան գործերով՝ նրանց խնամք չէր տանում, նաև բոլոր ծառաներն էլ վախենալով իր երկրորդ կնոջից ոչինչ չէին անում նրանց: Նրանք միայնակ և լքուած էին, չընայած որ բնակուում էին մի գեղեցիկ պալատում, ուստի մեծ իշխանուհին վերջապէս վճռեց փախչել:

«Ինձ հետ կգաս, Չանդրա» ասաց նա իր քրոջը, այստեղ ոչ ոք մեզ չի սիրում ու խնամում»: «Մհ, մենք անտառը կերթանք» ասաց Գուլգան: «Մենք ուտելու համար կը գտնենք առատ պտուղ, ծառի ձղերից կը շինենք մի տնակ և ծաղիկներից ու խոտերից էլ մի անկողին»: «Շատ լաւ,» ասաց Չանդրան, «բայց կը հաղնեմ իմ մետաքսեայ գեղին

շորերս ու վրաս կը կրեմ լակինթներս և դու էլ պէտք է կախ տաս քո մարգարտեայ մանեակն, այնպէս որ եթէ մենք հանդիպենք պատահական մարդկանց, նրանք մեզ ճանաչեն, որ մենք իսկ իշխանուհիներ ենք»: Գուլգան համաձայնուեց սրան, բայց լետոյ երբ նրանք անտառ գնացին, նա իր միտքը փոխեց դրա մասին:

«Եթէ մարդիկ մեզ իշխանուհիներ կարծեն՝ նրանք կարող են մեզ առևանգելու փափագ ունենալ», ասաց նա: «Մենք մեր լակինթներն ու մարգարտները մեր ծածկոցների ծայրերին կը կապենք»: Չանդրայի շրջազգեստն այն սովորական տեսակի շրջազգեստներից չէր որի նման անգլիացի երեխաներն են հագնում, այլ մի երկար ու լայն մետաքսեայ հանդերձ, որը նա ոլորած և փաթաթում էր իր մէջքին և գլխի վրայ և որին սառի էր անուանում նա: Գուլգան էլ փաթաթուեց իրենի մէջ. իրենը բաց կապույտ մետաքսից էր սպիտակածիւր եզերքներով, ու երկուսն էլ՝ թէ ինքն և թէ Չանդրան ունէին իրենց բազուկների վրայ ապարանջաններ: Բայց նրանց ևս չը թաքցրին, որովհետև բոլոր փոքրիկ հնդկուհիներն էլ նրանցից կրում էին: Նրանք երկար թափառեցին անտառում

և տեսան կապիկները ծառերից ճոճուելիս ու կանաչ թուլթակներն արևում շողալիս: Նրանք պտուղներից այնքան կերան՝ որքան ցանկացան, ուստի և իրենց շատ աւելի երջանիկ էին զգում, որից զուրկ էին երկար ժամանակ: Ի վերջոյ նրանք հասան մի գեղեցիկ պալատի որ շինուած էր սպիտակ մարմարիներից, որի դարպասի դուռը լայն բացուած մընում էր: Վերև՝ դարպասի ճակատում գըրուած էին այս խօսքերը ոսկեղէն տառերով:

«Մտիւր, Գուլգա, մի վախենայ, այստեղ քեզ սպասում են արծաթ և ոսկի»: Մինչ քոյրերը հիանում էին դրանով՝ տառերը փոխուեցին ու այս անգամ նրանք կարդացին, «նրան հետևի՛ր Չանդրա, դու կը տեսնես թէ ինչպէս բախտը կարող է լինել գըրթած և անգուլթ»:

«Դա մի այնպիսի սիրուն ոտանաւոր չէ, ինչպէս քոնը. դա, դա ինձ մի քիչ վախեցնում է», դողդողալով ասաց Չանդրան: «Ինքս էլ մի քիչ վախենում եմ», խոստովանուեց Գուլգան, «վախենում եմ, որ այս պալատը պատկանում է մի գէլի»: «Դէն ինչ է»: Մի տեսակ ճիւղ է, որ եթէ մենք ներս գնանք մեզ կ'ուտէ: Ոչ ոք, բացի մի ճիւղից կը շինէր այսպիսի մի պալատ անտառում: Բայց

նա պէտք է դուրս գնացած լինի»: «Նա կարող է յանկարծ գալ, արի հեռանանք», ասաց Չանդրան, բռնելով իր քրոջ ձեռքից ու դեռ ևս շփոթուած նայելով: Ճիշտ նոյն ժամին մի փոքրիկ մարդասէր շնագալ վազելով եկաւ դէպի Գուլգան և ասաց նրան:

«Միանգամայն ուղիղ ես դու: Դա պատկանում է մի դէպի: Իսկ նա հեռացել է: Ձեզ համար միանգամայն ապահով կը լինի մի առ ժամանակ նրա տանը բնակուել: Ես ձեզ կ'իմացնեմ հէնց որ նա լետ գալ»:

Այսպէս Գուլգան և Չանդրան ցած գրնային գաւիթն և բակից անցան պալատը: Դրանում գտան մետաքսեայ սիրուն հանդերձներ, գոհարներ, ոսկի և մի գեղեցիկ մարմարեայ աւազան լցրած վճիտ աղբերաջրով, ուր նրանք կարող էին յողանալ ամեն օր: Աւազանի ջրի երեսին տատանում էին Լուտասի մի քանի ծաղիկներ: Քոյրերը սրանց հաւաքեցին իրենց ծամերի մէջ հիւսելու, որովհետև նրանք երեսայուլթիւնից սովորութիւն էին ունեցել Լուտաս արքայական ծաղիկով իրենց ծամերը հիւսել:

«Բայց քոյրիկ», ասաց Գուլգան, «եթէ դու մենակ լինես տանը ու մի որևիցէ օտարական գալ դռան ուտելիք կամ խմելիք խընդ-

րելու, չմոռանաս պատուտուած շորերդ հագնելը, երեսներիդ ածուխ քսելը և քեզ տգեղացնելը նախ քան նրանց մօտ գնալդ»: «Ինչո՞ւ», հարցրեց Չանդրան: «Որովհետև եթէ մարդիկ քո գեղեցկութիւնը տեսնեն, նրանք քեզ կ'առևանգեն ու մենք իրար էլ չենք տեսնի երբէք»: «Ի՞նչ որ այդպէս է, դու էլ պիտի նայնպէս վարուես, ամեն օք ասում է, որ դու ինչնից աւելի գեղեցիկ ես», ասաց Չանդրան:

Իշխանուհիները թեքուեցին աւազանի վրայ դիտելու ջրի միջից իրենց ցոլացող դէմքերը, բայց դժուար էր այդ կերպով որոշել թէ երկսից ո՞վ էր աւելի գեղեցիկը: Իրենց աչքերը աստղերի նման էին, ատամներն աւելի սպիտակ քան մարգարիտներ և երեսի գոյնը մաքուր, գեղեցիկ ու նազելի:

Սակայն Գուլգան մի քիչ աւելի բարձրահասակ էր իր քրոջից և իրեն աւելի շնորհալի էր ցոյց տալիս: Մի առաւօտ, Չանդրան անտառը գնաց իրենց բարեկամ շնագալի հետ զրոյց տալու համար, զեռ հազիւ էր հեռացել, որ որսորդութեան ելնող մի իշխան եկաւ պալատի դարպասի մօտ մի քիչ խմելու ջուր ուղեւու. ինքն ու իր ծառաներ որոնել էին ջրի մի վտակ բայց չէին գտել, ուստի նրանք

Ծարաւից պապակոււմ էին: Գուլգան հագաւ
 ցնցոտիներ իր մետաքսեայ շորերի վրայից ու
 ածուխ քսեց իր երեսներին նախ քան իր ցած
 գնալ ու տեսնել թէ ինչ են ուզում: Իշխանի
 ծառաները ծիծաղեցին երբ գուռը բացում
 էր մի օտարտի կերպարանքով - քրքրուած
 շորերով ու մրոտուած երեսներով մի աղջիկ,
 բայց իշխանն ուշի ուշով դիտեց նրան: «Նա
 շատ գեղեցիկ է», ասաց նա «եթէ միայն իր
 երեսներն ու ձեռները լուացուէին ու շորերը
 փոխուէր»: Գուլգան չէր հասկանում նրանց
 խօսած լեզուն, բայց նրանք հասկացրին որ
 ծարաւ էին, ուստի նրանց համար բերեց մի
 մեծ փարչ լիք ջուր: Փարչն ստանալով իշխա-
 նը, ամենից առաջ գործածեց նրա գլխի և
 երեսների վրայ մի մասը շաղ տալով: «Օ՛յ, օ՛յ»
 աղաղակեց Գուլգան յետ քաշուելով: «Հա՛,
 հա՛» քռքուացին որսորդները: Արովհետև մու-
 ըր լուացեց, ուստի Գուլգան կանգնեց նրանց
 առաջ այնքան գրաւիչ և գեղեցիկ տեսքով
 նոյն իսկ իր քրքրուած շորերում, որ իշխանն
 իսկոյն և եթ սիրահարուեց նրա վրայ: Նա իր
 ձեռքով բռնեց նրա ցնցոտիներից և ժաժ տը-
 ուեց, որոնք պոկուեցին և ցած ընկան թող-
 նելով նրան իր սիրուն կապուտ սաւրի-ով ըզ-
 գեստաւորուած և մարգարտեայ մանեակով,

որը շրջանակել էր նրա պարանոցը: «Ես քեզ
 կը տանեմ իմ հօր թագաւորութեան մէջ ու
 դու կը դառնաս իմ կինը» ասաց նա: Գուլ-
 գան շհասկացաւ թէ նա ինչ ասաց: Նա շատ
 ահաբեկուեց ու դեռ ևս աւելի ահաբեկուեց
 երբ յափշտակելով դրին նրան իշխանի պատ-
 գարակներից մէկում և պալատից հեռու տա-
 րան: Ապասաւորները քաշեցին վարագոյրներն
 և նրան ներս փակեցին ու հեռացան անտա-
 ուի միջով՝ բլուրների և ձորակների վրայից,
 իշխանի առաջնորդութեամբ, որը սպիտակ
 ձիւ վրայ հեծած առաջից գնում էր: «Ո՛հ,
 Չանգրա՛, Չանգրա՛, ինչպէ՛ս պիտի անես դու
 առանց ինձ», հեկեկոց Գուլգան: Բայց նա
 որոշեց եթէ կարելի էր հնարաւորութիւն
 տալ իր քրոջ իմանալու թէ ինքն ինչ ճանա-
 պարհով էր տարուել, ուստի դեռ շատ չը
 հեռացած դէպի անտառի խորքը, նա պատ-
 ուեց իր սաւրի-ից մի կտոր ու նրանում ծրարեց
 իր մարգարիտներից մէկն ու ձգեց գետին:
 Կրկին ու կրկին այսպէս արեց նա դնելով մի-
 մի մարգարիտ մի-մի մետաքսեայ կտորի մէջ,
 յետոյ ձգում էր գետին այն պալատի ուղ-
 ղութեամբ, ուր բնակուում էին իշխանի հայ-
 րին ու մայրը, Ռաջան և Ռանին - Թագաւորն
 և Թագուհին: Ասկեղէն սուաերն ասացին

«Տեառնիւր նրան Չանգրան», «ուստի՛ գուցէ նա կը գայ մի քանի օրերում», մտածեց Գուլգան ինքն իրեն: «Յետոյ մարգարիտներն ուզիզ կ'առաջնորդեն նրան ինձ մօտ»: Գուլգան կարիք չ'ունէր վախենալու թէ օրեկեց մէկը կարող էր անգթութեամբ վարուել իր հետ իր նոր տան մէջ, որովհետեւ Ռանին շատ ուրախացաւ մի այսպիսի սիրուն երիտասարդուհի հարսի բարի գալստեան վրայ: Ռաջան էլ ընծայեց մի նոր մարգարտեայ մանեակ, բացի սրանից մի մեծ քանակութիւն գոհարներ և սասց՝ նա կ'ամուսնանայ իր որդու հետ յաջորդ շաբաթին: Մինչդեռ Չանգրայի մեծ քոյրը սիրւում ու փայփայւում էր Ռաջայի պալատում, ինքք գէւի պալատի ներսում նստեց և սկսաւ այնպէս բռնալ, որ հէնց կարծես սրտի ցաւէց ընկճուէր: Նա վազվզում էր սենեակից սենեակ, դուրսն ու ներսը՝ «Գուլգան, Գուլգան, ուր ես գու» կանչելով, բայց ոչ ոք չէր պատասխանում: Պալատի ներսն ու դուրսը դատարկ և ամալի էր ոչ ոք չ'կար տան բաղնիսում կամ մեծ դահլիճում կամ կտրի վրայ: Չանգրան գնաց զարպասի մօտ ու նայեց դէպի անտառը, բայց Գուլգայի նամ ու նմուշ չ'կար: «Մէկը գողացած է նրան» տեսաց և սկսաւ ողբալ: Յանկարծ նա վերև նա-

յեց զարպասից բարձր ոսկեղէն արձանագրութեան՝ «Հետնիւր նրան Չանգրան, գու կը տեսնես թէ ինչպէս բախտը կարող է լինել զթած և անգութ»: «Միայն դրա կէսը ճշմարիտ է», սասց նա ինքն իրեն: «Ո՞ր կէսը», հարցրեց շնագայլը լանկարծ նրա լետիկց գալով: «Վերջին մասը»: «Եւ այդու ամենայնիւ բախտը զթած չէ եղեր»: «Գու շատ ապերախո ես» սասց շնագայլը, «գու այս վերջին երեք ամիսներին բնակւում ես հանգիստ ուրիշի պալատում և դու զեռ կեղծում ես, որ բախտ չ'ունես: Ահաւասիկ յայտնում եմ որ դէւը լետ վերագանալու վրայ է, ուստի դու չես կարող երկար մնալ այստեղ»: Բայց հէնց որ Չանգրան կրկին սկսեց լաց ու կոծ, նա աւելացրեց, «Հոգս մի արա, վերջը լաւ կը լինի: Արի փախչենք անտառը և ես կ'օգնեմ քեզ Գուլգային գտնելու»: Եթէ շնագայլի սուր աչքերը չ'լինէին, երբէք Չանգրան չ'էր կարող տեսնել առաջին փոքրիկ մարգարիտն, որը ծրարուած էր մի կտոր կապուտ մետաքսով ու ընկած էր խոտերի մէջ: Բայց դրանից լետոյ նրանք իրար լետիկց վերջին ուրիշներ ևս ու այսպէս նրանք հետզհետէ գնացին մինչև հասան անտառի միւս կողմը: Բանը սկսեց մի քանի օրեր և շնագայլն այլ ևս ա-

ւելի հեռու չէր գնում: «Ո՛չ» ասաց նա, «կան շատ բազմաթիւ քաղաքներ անտառից դուրս ու մարդիկ ևս գթած չեն շնագայլի վերաբերմամբ: Բայց եթէ ես քո տեղ լինէի ինքս ինձ մի պառաւ կնոջ տեսք կը տայի, եթէ ոչ մէկը քեզ կը տանի ու դու երբէք չես կարող Գուլգային գտնել»: Նա ցոյց տուեց Չանդրային մի բոյս, որի հիւթով տգեղ թխագոյն կը ներկէր իր մորթը, նաև ասաց նրան թէ ի՞նչպէս խորշումներ շինելու էր: Այլա խընդրեց նրանից սպասել անտառի դրսի կողմը մի քանի բոպէ, մինչ նա գնաց դանելու մի կարմիր բամբակեայ կոշտ սաւի, որը մի պառաւ կին լուանալուց լետոյ կախել էր իր խրճիթից դուրս, որ չսրանար: «Արտեղից բերիք այս», հարցրեց Չանդրան, երբ նա իր բերանով բռնած բերեց նրան: «Նա մի ցանկապատի վրայ բուսել էր», պատասխանեց շնագայլը: Նա չբնամարձակուեց Չանդրային ասել, որ գողացել էր: Իշխանուհին հագաւ այն ու ներկեց իր երեսներն ու ձեռներն և ապա մի պառաւ կնոջ նման կաղալով, ձեռքը մի փայտ բռնած, գնաց անտառի լետեւի երկիր: Այստեղ ու այնտեղ նա գտնում էր Գուլգայի մարգարիտներէից մէկը, երբեմն երկուսը միասին ծրարուած և երբեմն երկար հեռաւորութիւն

իրարից անջատ, նա շատ և շատ տխրեց նրանից նայելով: Բայց վերջապէս հասաւ այն քաղաքին ուր տարուել էր Գուլգան ու նա գտաւ վերջին մարգարիտը պալատի գարպոսի դիմաց: «Նա այստեղ կը մնամ, որքան կարելի է պալատի մօտ ու քանի սրից լետոյ կարող կը լինեմ ներս գնալ», մտածեց Չանդրան: Սի երկրագործի կին գթում էր պառաւի վրայ, նա այնքան մտածեց նրա մասին, որ նա գիշերուայ ապաստան տուեց լետոյ թոյլատրեց նրան քնել իր պարտէզում եղող մի խղի մէջ: Այս պարտէզը պալատի մօտն էր: Ալալատի ու սրա միջի տարածութեան վրայ շինուած էր մի մարմարեայ աւազան, որ գործածուած էր որպէս լողարան և որը ծածկուած էր լուսասի կարմիր ծաղկներով: «Առաւօտ կունուի գեռ ոչ ոք չարթնացած ես կերթամ և կըղանամ այնտեղ» ասաց Չանդրան ինքն իրեն, երբ տեսաւ որ մարմարեայ ատիճաններն տանում էին ցած դէպի զովարար ջրի փոսը: Սա տարուայ այն մտմանակն էր, երբ արևը մասի երեքից լետոյ շուտով բարձրանում էր և մինչև անգամ դրանից գեռ աւելի կանուխ իշխանուհին դարս էր գայիս իւր խղից և գնում էր լողանալու, որովհետև նա վախենում էր մարդկանցից տեսնուելուց:

Նա գէն արեց հին կարմիր սաւիմն և լուաց ու կախեց մի ծառի վրայ: Յետոյ ինքը լողացաւ և լուաց տղեղ թխագոյն ներկերըն ու խորշոմները իր երեսներից ու պարանոցից, ապա հագաւ իր սեփական դեղին մետաքսեայ սաւիմն և անցկացրեց իր պարանոց յակնթեայ մանեակ և հիւսեց մի քանի լուտասի ծաղիկներ իր ծամերի մէջ, երբ սպասում էր, որ իր միւս շորերը չորանան:

«Ճիշտ այս մի ժամին ես տեսնում եմ որ ինքս Չանդրան եմ» մտածեց նա, հէնց որ նայեց ջրի մէջ իր ցոլացող պատկերին: Իր ծամերի արքայական լուտասոր լիշեցրեց նրան իր հին օրերը, որ սպրում էր իր հօր պալատում նախքան իր անգութ խորթ մօր գալը: Իր կարօտը աւելի էր քաշում: Ռաջան պարծենում էր այս դեղեցիկ լուտասի ծաղիկներով: Նա շատ կը բարկանար երբ լսէր, որ երկուս կամ երեքն աներևութացան իւրաքանչիւր առաւօտ արևածագից առաջ: «Գողը խստիւ կպատժուի» յայտարարեց նա: «Ես կը վարձատրեմ նրան, ով կը բռնի գողը»: «Կարիք չկայ ձեզ այդ անելու» ասաց Ռաջայի երկրորդ որդին, սրը մի գեղեցիկ երիտասարդ իշխան էր, շատ նման Գուլգայի ամուսնուն: «Ես նրան կը բռնեմ առանց որև-

իցէ վարձատրութեան»: «Այո» ասաց Ռանին իշխանը յաճախ ճեմում է պարտէզում գիշերուալ գովին ինքն իրեն վերանորոգելու մտաւոր աշխատանքներից յետոյ: Նա միանգամայն հեշտութեամբ այդ կանի»: Իշխանն՝ ինչևիցէ, զինի երկար ժամանակ աստ և անդ ճեմելուց, զնայ քնելու ջրի աւազանի մօտ գտնուող մի մացառի ներքև ու չարթնացաւ մինչև արշալոյսը: Հէնց որ արևը ծագեց և նստեց մարմարեայ ամենաբարձր աստիճանի վրայ, նա տեսաւ մի սիրուն աղջկայ, հագած դեղին մետաքսեայ շրջահանդերձ, իր պարանոցի շուրջ յակնթեայ վզնոց, իր մազերի մէջ լուտասի ծաղիկներ: «Գնու ես ուրեմն գողը», հարցրեց նա, արագ վերցատկելով: Չանդրան էլ ցնցուեց իր ստերի վրայ ահաբեկուած հայեացքով, «Գնո՞ղ» նա կակազեց: «Մի վախենայ» ժպտելով ասաց իշխանը: «Է՛հ, ինչ է մի ծագիկ, ես կարող եմ քաղել քեզ համար մի քանիսն աւելի, եթէ դու սիրում ես»: Իշխանուհին շարժեց իր գլուխը և վազեց առնել իր կարմիր բամբակեայ ծածկոցը: «Ես պէտք է երթամ, ասաց նա, խնդրեմ ոչ ոքի չասէք որ դուք ինձ տեսել էք»: «Գուրք պէտք է հեռու երկրից եկած լինէք Գուլգայի նման — ուզում եմ ասել նա քո պէս զրոյց

է տալիս», սոսայ իշխանը, կրկին ժպտելով
 Զանգրայի տարօրինակ շեշտի վրայ, թէպէտև
 չէր կարողանում աչքը թարթել իր սիրուն
 երեսներին: «Վուլգայի մասին գրոջց ես տա-
 լիս» հարցրեց Զանգրան: Պատաւ կնոջ շրջա-
 հանդերձը ձեռքից ձգեց ու դեռ ևս կանգ-
 նեց Վուլգայի անունը մի ուրիշի շրթունքից
 լսելն այնպէս էր նրա համար, ինչպէս մե-
 ղեգի: Նա շատ էր կարօտել իր քրոջ և այն-
 քան լալով որոնել էր, որ կարծում էր եր-
 բէք չէր տեսնի կրկին նրան:

«Աս մեր հարսն է», սոսայ երիտասարդ
 իշխանը: Արի պալատը և դու կոտենես նրան:
 Մենք Վուլգային կոչում ենք պալատի սոսոյ
 նրա համար, որ նա այնքան գեղեցիկ է, բայց
 ես կարծեմ որ դու աւելի գեղանի ես քան
 թէ նա: Նա այնքան համակրանքով խօսեց,
 որ Զանգրան այլևս վախ չէր զգում ու նա
 նրա ձեռքից բռնած միասին գնացին պա-
 լատը: «Զարմանք» սոսային պալատականներն
 երբ նրան տեսան — «նա միշտ պալատի սոսոյ
 է — մեր երիտասարդ Ռաջայի կնոջ նման է»:
 Երբ իշխանը տարաւ սրան իր հօր ու մօր՝
 Ռաջայի և Ռանու մօտ, խնդրեց նրանց թոյլ-
 աւութիւն ամուսնանալու նրա հետ: Ապա
 իշխանուհին սոսայ նրանց, որ ինքը Վուլ-

գայի քոյրն էր և ինչպէս էր ճանապարհոր-
 գում նրան որոնելու համար, ապա Ռանին
 այնքան ուրախացաւ իր հեղանոյշ երեսով և
 մեղմանոյշ վարքով որ նա սոսայ, իշխանը կա-
 րող է պսակուել այնքան շուտ որքան սի-
 րում է: Նրանք գնացին պալատի այն մասում
 ուր բնակւում էր Վուլգան և ուր մի սի-
 րուն սենեակում որ լուսաւորուած էր գոհա-
 րագարդ ճրագներով և չքեղ մետաքսեայ վա-
 րագոյրներով, այնտեղ գտաւ Զանգրային՝ իր
 քրոջը: Վուլգան զգեստաւորուած էր ամենա-
 չքեղ մետաքսեայ շորերով, որ վայել էր
 մի երիտասարդ Ռաջայի կնոջ, բայց նրա դէմ-
 քը տխուր էր, որովհետև Զանգրայից բա-
 ժանուելու օրերից ի վեր նա մի րոպէ չէր
 կարողացել մոռանալ նրան: «Օ՛հ, Զանգրա»
 աղաղակեց նա դէպի նա վագելով, «բախտը
 գլխաց ի վերջոյ:» «Այո՛, շնագայլն ասաց ամեն
 բան ուղիղ վերջաւորութիւն կունենայ», պա-
 տասխանեց Զանգրան լի սուրախութեամբ:
 Երբ Վուլգան լսեց, որ Զանգրան տագերկին
 է լինում, ինչպէս և իր քոյրը և բնակուելու
 է իր հետ՝ կրկին և կրկին համբուրեց նրան:
 Եա կը ցաւկայի որ շնագայլը այստեղ լինէր
 մեզնից մի պատգամ տանելու դարպասին՝
 սակեղէն տառերը փոխելու սոսայ նա, «պէտք
 է լինի այսպէս, երկար որոնիր, հեռու որո-
 նիր և դու կը գտնես որ համբերութեամբ
 որոնողներին բախտը գլխած է»:

1002
 269

Լ Ի Ն Պ Օ Ե Ի Հ Ս Կ Ա Ն

Մի ծառ կար, որ աճել էր անտառի արտում: 'Իա շատ հին էր, բայց հասկառակ իր տարիքին, ամեն գարունքին նա գարգարում էր սիրուն, սպիտակ ծաղիկներով և թարմ կանաչ տերևներով: Մի գարուն՝ ծաղիկներն աւելի սիրուն էին քան երբև իցէ, մի կոկոն, որ կախուել էր երրորդ ճղից, սպիտակ արծաթեայ գնդի նման գեղեցկութեամբ փայլում էր կանաչների միջից: «Այդ մի կոկոնն ինչու այնքան աւելի մեծ է քան թէ միւսները» հարցրեց վայրենի խնձորածաղկի ծառը, որ աւելի հետաքրքիր էր: «Ա՛հ» պատասխանեց թղենին «դա մի գաղտնիք ունի, դա չպիտի բացուի մինչև մի աղմկալի փոթորիկ չ'լինի գիշերուայ կէսին: Ապա դուք կը տեսնէք մի բան: «Ի՛նչ, կէս գիշերին», հարցրեց խնձորածաղկենին «Այո՛, դու պիտի տեսնես փայլակով»: Բայց խնձորածաղկենին չափազանց վախենում էր վերև նայել, երբ փոթորիկն եկաւ, կայծակը շողաց ու որոտը գոռաց: Նա դողաց ու գլուխը կախեց: Մինչև անգամ թղենին էլ դողում էր մերթ ընդ մերթ, բայց

մեծ հին ծառը քաջութեամբ իր ճիւղերը փոթորկի առաջ բռնեց և այդ միջոցին կոկոնը պայթեց: «Այս է իմ գաղտնիքը» ասաց ծառը և խոնարհեցրեց հեգօրէն իր երրորդ ճիւղը, շատ հեգօրէն դէպի երկիր: Կոկոնը բացուեց ու երևաց որ ծաղկի մէջ պառկել էր մի սիրելի փոքրիկ պիպիկ-երեսայ այնքան սիրուն որքան ծաղիկն ինքը, խուճուճուած իբրև թէ քնած լինէր: Ծիւղը ծաղկից գուրս խոտերի վրայ ձգեց նրան, ուր նա պառկած ժպտում էր երկնքին և դիտում կապտաւուն-սպիտակ կայծակը փայլակելիս այնտեղ: Առաւօտեան ամեն ինչ խաղաղուեց ու մանկիկը պարգեց իր թաթիկները ծաղիկներին նրանց հետ խաղալու համար: «Նայիր» ասաց թղենին, «նա հագել է մի փոքրիկ սպիտակ մետաքսեայ շապիկ այն ծաղկի գոյնով, որի միջից ծնուեց: Նա ունի իր ճակատին մի շողշողուն աղամանդ՝ նա մի հրաշալի մանկիկ պէտք է լինի»: «'Իա աղամանդ է թէ աստղ» հարցրեց խնձորածաղկենին: Բայց ոչ ինքն և ոչ թղենին կարող էին իմանալ, դա այնքան չափազանց պայծառօրէն շողաց նրանց առաջ որ չէին կարող նայել: Ենազայլերն ու թուլ-թուկները, կապիկներն ու ճլւլլան թուչունները, բոլորն եկան երեսային տեսնելու: «Նա

աւելի գեղեցիկ կ'երևար աղուամազով՝ ասաց շնագայլը «թէ՛ փետուրներով» ասաց թուլթակը: «թէ՛ թևերով» ասացին փոքրիկ ճլւղլան թռչուններն սլանալիս ծաղիկների ներան ու դուրսը: Բայց բոլորն էլ համաձայնուեցին թղենու հետ, որ նա պէտք է մի հրաշալի մանկիկ լինի, եթէ ոչ նա չէր ծնուի ասողագարդ ճոկատով, կէսօրուան՝ մանկիկը մի փոքր լացաւ, որովհետև քաղցեցաւ, բայց թըղենին կաթեցրեց իր բերանը մի քիչ մեղրահիւթ և նա շուտով կրկին ժպտեց: Արևմտցին մի էգ վագր եկաւ սիգալով անցնելու և նշմարեց նրան: «Նա իմ ձագերիս համար ընթրիք կը լինի», ասաց նա, «ես ձագերիս կը բերեմ այստեղ»: Բայց ծաղիկներն ու խոտերը ծածկեցին նրան, այնպէս որ նա չը կարողանար գտնել նրան երբ վերագառնար: «Նա մեր մանուկն է, նա պատկանում է ծառերին ու ծաղիկներին և մենք չենք թողնի որևիցէ վնաս հասնի նրան», ասացին նրանք: Միւս ծառերն հարցրին հինաւուրդ ծառին թէ ինչ անուն տալու էին նրան: «Նրա անունն է Լինդօ, ասաց նա, «խնամք տարէք և սովորեցրէք նրան անտառի գաղտնիքները»: Աւտի երբ Լինդօն մեծացաւ, վայրի կենդանիներն ու ծաղիկները սովորեցրին նրան այն

ամենն, ինչ որ իրենք գիտէին: Դամ — մեծ կրիան որ բնակւում էր մօտակայ գետում, նրան լողալու դասեր տուեց, կապիկները ցայց տուին թէ ինչպէս պէտք է ծառերի վրայ մագլցել և ճլւղլան թռչուններն էլ սովորեցրին թէ վայրի անտառի ո՞ր կողմեր անում են պտուղներն ու մեղրահիւթ ծաղիկները: Նա սովորեց ճանաչել այն խոտերը, որոնք կըբժշկէին իր վէրքերը, եթէ վնասուէր: Նա նոյնպէս սովորեց անտառի օձերին դիւթելու կերպը և ուրիշ շատ բաներ, որ տներում իրենց հայրերի և մայրերի հետ ապրող երեխաներն երբէք չգիտեն: Գիշերները նա ննջում էր մի ճօճքի մէջ, որ ծաղիկներ շինել էին նրա համար իրենց ոլորուն ընձիւղներով թղենու տակ և առաւօտանց կանուխ նա լողանում էր գետում, նոյն ժամանակ կախելով իր ըսպիտակ շապիկը մի ծառից որ չորանար: Որքան ինքը մեծացաւ, իր շապիկն էլ իր հետ մեծացաւ և երբէք չէր մաշւում ու կարկտաւում: Մեծանալով, նա մի պարթև և գեղեցիկ տղայ դարձաւ, այնքան բարի և ազնիւ որքան ուժեղ և քաջ: Բոլոր անտառի կենդանիները նրան սիրում էին, մինչև անգամ այն վագրն էլ որ ցանկացել էր նրան կորիւններին կեր շինել, երբ դեռ երեխայ էր: Բայց

մի օր Լինգօն հարցրեց հինաւուրց ծառին՝
 թէ արդեօք ուրիշներ էլ կային իրեն նման:
 «Կան բազմաթիւ կապիկներ, շնագայլեր ու
 թուլթակներ, սպան միայն մի Լինգօ կայ» աս-
 սաց նա: «Ինչո՞ւ ես ուզում իմանալ»: «Ես կը
 սիրէի տեսնել նրանց», ասաց սրամիտ Լինգօն:
 «Մագլցիք իմ ամենաբարձր ճիւղի վրայ և աս-
 սանք ինձ թէ ինչ ես տեսնում», ասաց ծառը:
 «Ես տեսնում եմ մի բլուր սրածայր գագա-
 թով», արդարեւ նա, երբ այնտեղ ելաւ: «Ի՞նչ
 ասողա՞նք բլուրն է, ասաց հինաւուրց ծառն»,
 ծայրի մօտ մի ծառ է, որ ծածկուած է վարդա-
 գոյն ծաղիկներով: Ի՞նչ Քրիցադիթան է: Ծա-
 ուր բարձրացիր և ծաղիկները հոտոտիր ու
 հարցրու նրան թէ ո՞ւր են չորս եղբայրնե-
 րը»: ուստի Լինգօն վազեց անտառը մինչև
 հասաւ ասողա՞նք բլրին ու վարդագոյն ծաղիկ-
 ներով ծառին-Քրիցադիթային: «Ո՞ւր են չորս
 եղբայրները», հարցրեց Լինգօն, հէնց որ հո-
 տոտայ ծաղիկները: «Նրանք պատրաստում
 են իրենց ընթրիքը բլրի միւս կողքի վրայ»,
 ասաց Քրիցադիթան: Լինգօն յառաջ գնաց բլ-
 րի գագաթի վրայ ու գտաւ չորս բարձրահո-
 սակ սրսորդներ իրենց սպանած մի եղջերուն
 քերթելիս: Երբ նրանք տեսան տղային իրենց
 մօտենալիս, սպիտակ հագնուած, աստղաճա-
 կատ ու գեղատեսիլ գէմքով, նրանք վազեցին

նրան գիմաւորելու: «Մեզ հետ կուզես եղ-
 բայրանալ, մենք չորս եղբայրներ ենք, կը
 լինես գու հինգերորդը», ասացին նրանք:
 «Հէնց դրա համար էլ ես եկել եմ», պատաս-
 խանեց Լինգօն: «Անտառի բոլոր արարածներ
 ունեն եղբայրներ և քոյրեր ու ես չունեմ. ես
 ցանկացայ գտնել մի քանի եղբայրներ»: Յե-
 տոյ նրանք ասացին, որ կրակ չունէին ու
 պարտաւորուած էին ուտել եղջերուի միսը
 հում-հում: «Երկու բաներ կան որ մենք ու-
 զումենք», ասաց պղտիկ եղբայր Ահէստէլը:
 «Իւրաքանչիւրս մի կին և մի խանձող մեր կը-
 րակն անելու և մեր եղջերուն խորովելու
 համար»: Բայց միւս եղբայրները ասացին, որ
 իրենք իւրաքանչիւրը կուզէին ունենալ երկ-
 երկու կին, և նրանք իմացան թէ ուր կարե-
 ւի է գտնել իրանց նաև խանձողը: «Հսկայ
 Ռիգագ-Պառին բնակում է այս մօտերքում
 և նա ունի վառուող կրակ իր օջախում: Բացի
 դրանից նա ունի եօթն աղջիկներ, որոնք
 կարօտ են ամուսնութեան: Բայց մենք երբէք
 չենք կարողացել իր տունը գտնել», «ես ցոյց կը-
 տամ ձեզ նրա տուն ճանապարհը, եթէ դուք
 կտաք ինձ մի աղեղնափայտ», ասաց Լինգօն:
 Ահէստէլը բերեց նրան մի աղեղնափայտ և
 Լինգօն նրան յարմարեցրեց-պրկելով ու թե-

քելով ուղղեց նետը շիտակ հակայի պալատին: «Իմ նետը բացաւ ձեզ համար ճանապարհ» ասաց նա, «հետևեցէք զրան և կը գտնէք ինչ որ ուզում էք»: Եղբայրները հետևեցին Լինգոյի բացած ճանապարհին բայց Ահէսէտէլ, որ ամենից արագավազն էր, հասաւ այնտեղ ամենից առաջ:

Հսկան պառկած քնել էր կրակի կողքին մի մեծ սենեակում, որտեղի մահճակալը ութ ոտք բարձր ու քսան ոտք երկար էր, իսկ առաստաղն այնքան բարձր էր, որ Ահէսէտէլը հազիւ կարողանում էր տեսնել: Ողջ-ողջ ծառաբրներ էին վառուում կրակի վրայ փոխանակ կոճղերի և կրակի տեղը նման էր մի ասհարկու կարմիր հրաշէկ այրի: Ահէսէտէլ կորզելով մի խանձող թի փախաւ՝ այդ ժամանակ մի կայծ ընկաւ հակայի ազդրի վրայ: Նա վեր ցատկեց մի ցաւագին գոռումով և տնից դուրս յարձակուեց նրա լետևից բայց չէր կարողանում բռնել նրան, ու Ահէսէտէլ լետ գնաց իր եղբայրներին զգուշացնելու որ Ռիկատ Գուռի մօտ չ'գնան: Նա իր փախուստի պահուն ձգել էր խանձողը: «Ես կը նախընտրէի բոլոր ժամանակ հում միս ուտել իմ կեանքում քան թէ գնալ մի այդպիսի հրէջի մօտ կրկին» ասաց նա:

Ռիկատի ժամանակ հսկան լետ գնաց և մտաւ այն սենեակ, ուր նստել էին իր կինն ու եօթն աղջիկներ բուժելու իր այրուածքը: «Աերջապէս մեզ համար ամուսիններ գտար» հարցրեց ամենամեծ աղջիկը: Նրանք հերթով այս հարցերն անում էին ամեն օր ու իւրաքանչիւր օր իրենց հայրը կորագլուխ պատասխանում էր, «ոչ, ով կարող է միանգամից եօթն աղջիկների համար ամուսիններ գտնել»: Բայց այս անգամ երկրորդ աղջիկը յառաջ եկաւ և հարցրեց նրան «ով էր այն երիտասարդը, որին իրենք տեսել էին ասան կտրի վրայից՝ դէպի անտառ փախչելիս», «գու սխալուեցիր նրան: Փախցընելով, նա լամենայն դէպս կ'լինէր մէկի ամուսինը», ասաց հակայի կինը: Եւ տես, այս նետն սենեակն ընկաւ առուօտեան: Կա նըշան է, որ որսորդը շուտով կը հետևէր դրան, լուսով եմ որ դու բախտի երեսից չես փախչի»: Հսկաների կանայք շատ քիչ անգամ վախենում են իրենց ամուսիններից, և սա մի այնպիսի յանդիմանութիւն տուեց Ռիկատ Գուռիին, որ նա շատ ուրախ եղաւ իբաց սողսկել ու կրակի կողքին խոր քնի մէջ ընկնել կրկին: Նա արթնացաւ մի երգի քաղցր ձայնով, որ գալիս էր իր պալատի որմի մօտ մեծացած մի ծառի ծայրից: Առաջին անգամ

նա նոտեց դեռ ևս լսելու գրան, բայց երթալով այնքան զմայլուեց, որ նա գնաց դուրս, ուր տեսաւ Լինգօին ճիւղերից մէկի վրայ նստելիս և վինն ածելիս: Մներ, կատուներ ու միւս ամբողջ կենդանիներ, որ իր տանն էին պատկանում, կիտուել էին ծառի տակ լսելու գրան, ճիւղերն ևս լցուել էին ճլւրլան թռչուններով: Երգն աւելի տխուր էր առաջին անգամ, բայց տնմիջապէս փոխուեց ուրախ գուարթ եղանակի ու Ռիկատ-Գուռին վեր բռնեց իր քղանցքներըն ու սկսեց պարել: «Այ քեզ տխմար ծերունի», սոսց իր կինն երբ գուրս եկաւ և նրան տեսաւ: Բայց մի քանի րոպէներ նա ևս սկսաւ պարել իր սաւրին ձեռքով վեր բռնելով: Իր ձեռքերի և ոտների ապարանջանները գնդգնդում էին ու չխկչխկում, կարծես թէ նա մի ջահէլ աղջիկ լինէր: Հսկան այնքան ուրախացաւ գրանով, որ նա առաջարկեց տալ Լինգօյին ինչ բան որ նա խնդրէր, նրա ծառից ցած եկած մամանակ: «Ուրեմն տուեցի՞ք ինձ ձեր եօթն աղջիկները» սոսց Լինգօն, «իմ մեծ եղբայրներից իւրաքանչիւրը ուզում է երկերկու կին և իմ պգտիկը ուզում է մէկը: Եւ թոյլ տրւէք ինձ ունենալ մի վառուած ձեր օջախից»: Հսկայի աղջիկները չափազանց ուրա-

խացան և նրանք Լինգօյին տուին իր նետը, որը լաւ նշանակ էր: Յետոյ իւրաքանչիւրն առաւ որպէս հարսանեկան օժիտ այն քանակութեամբ զգեստներ և գոհարներ, որքան նրանք կարող էին իրենց գլխով կրել և նրանք մնաս բարով ասացին իրենց հօրն ու մօրը ու գնացին Լինգօյի հետ անառի միջով դէպի Քիցագիթան ծառի բլուրը: Այստեղ չորս եղբայրներն ամուսնացան նրանց հետ և նրանք բոլորն էլ միասին երջանիկ էին ապրում: Բայց քանի որ Լինգօն չուզեց պսակուել և քանի որ ամենից խելօք և ամենից լաւն էր նրանց մէջ, նրանք առաջարկեցին նրան որ լինէր իրենց Թագաւոր: Եւ հսկայի աղջիկները իրենց գոհարներից մի թագ շինեցին նրա համար, բայց նրա ճակատի աստղը աւելի պայծառօրէն արտաշողում էր նրանց բոլորի մէջ:

ԼՈՒՍԱՍՓԻԻՌ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Մի օր մի երիտասարդ Ռաջա՛հ դուրս գընաց զէպի անտառ որսի և կէս օրուան, երբ շատ շոգ էր նա նստեց մի ծառի տակ հանգչելու: Իր մայր—Ռանին, տուել էր նրան քանի հատ շաքարահացեր իր հետ վերցնելու և նա մտածեց որ ինքը կարող էր նրանցից մէկն ուտել նախ քան իր կէսօրուայ քունը: Բայց երբ առաջին շաքարահացը բացեց, նրբանում տեսաւ մի մրջիւն: «Ես պէտք է փորձեմ մի ուրիշը», ասաց նա: Միւսում կար երկու մրջիւն, երրորդում՝ երեք և այսպէս շարունակ, մէկն աւելի իւրաքանչիւր անգամ: Վերջինում գտաւ վեց հատ մրջիւների թագաւորը մրջիւն Ռաջահի հետ միասին, «դուք կարող էք ուտել կարկանդակները» ասաց նա մրջիւն—Ռաջահին «աւելի ձեզ են պատկանում քան թէ ինձ»: Ապա խոր քուն ընկաւ ծառի տակը: Երբ նա երազում էր Մրջիւն—Ռաջահը սողաց զէպի նրա ականջը և փսփրսաց, «Մենք կերանք շաքարահացեր, ուստի մենք պարտական ենք ձեզ: Կոյ մի որևիցէ քան որ մենք կարողանանք անել քեզ որպէս

հատուցումն»: «Ոչինչ» պատասխանեց երիտասարդ Ռաջահն իր քնի մէջ: Ես աւելի փող ունեմ քան կարող եմ ծախսել, աւելի գոհարներ քան կարող եմ կրել և աւելի ծառաներ քան կարող եմ համարել: Եւ ես ձանձրացած եմ նրանցից»: «Որտե՛ր իշխանուհի Լաբամին նա այնքան սիրուն է ինչպէս արշալոյս: Դուք նրանից երբէք չէք ձանձրանայ», ասաց Մրջիւն—Ռաջահն: Զուարճալին այն բանն էր, որ երիտասարդ Ռաջահը վեր լիջեց զրուցաթուփիւնը երբ նա զարթնեց: Բայց երբ իր շուրջը նայեց մրջիւներին տեսնելու և մի փոքր աւելի լսելու իշխանուհի Լաբամի մասին, նա չ'կարողացաւ տեսնել Մրջիւն—Ռաջահը կամ որևիցէ մէկը իր բարեկամներից: «Ես անտառի միջով լաւաջ կերթամ և կըջանամ գտնել այն երկիրն ուր բնակուում է այդ իշխանուհին», մտածեց նա: Նա ճանապարհորդեց զէպի առաջ մինչև արևը ցածրացաւ, ապա նա եկաւ անտառամիջի մի լճի մօտ, որի եզերքին մի վագր կանգնած բուբռում էր: «Քեզ ինչ է պատահել, քաղցած ես», հարցրեց Ռաջահի որդին: «Ոչ, ես մի փուշ ունեմ իմ ոտքում, որ չափազանց է նեղացնում ինձ», պատասխանեց վագրը: Երիտասարդ Ռաջահը վաչր ցատկեց

իր ձիւնց և վագրի ստքին նայեց: «Ես կտրող եմ դուրս հասնել գրան՝ քեզ համար», ասաց նա «և կը կապեմ մի քանի բուժիչ տերևներով և այդ տեղի վրայ կը կապեմ մի կտոր իմ փաթթոցից»: Այսպէս արաւ և հէնց որ կրրկինն իր ձին հեծնում էր մի էգ վագր անտառի միջով յարձակմամբ եկաւ, «Ո՛հ, այստեղ մարդ է, «աղաղակեց նա իր վագր անուանուն: «Չե՞ս ուտում նրան», «Այ» ասաց վագրը, «իմ ստքից փուշը հանեց նա և ես շատ երախտապարտ եմ նրան: Եթէ նա երբ ևեցէ օգնութեան կարօտի, մենք պէտք է տանք նրան այդ»: «Աւելի լաւ է ուտել նրան» քըրթմնջեց էգ վագրը. որ չէր կարողացել ընթրիքի համար որևիցէ բան գտնել, «Այ» աղաղակեց իր ամուսինը մի այնպիսի ահարիսու բուսցով, որ նա ի բոց փախաւ ծառերի տակ և չհամարձակուեց յետ դալ մինչև չը գնաց Ռաջահի սրգին: Վագրը տուեց նրան՝ իշխանուհի Լաբամի երկրի ամենակարճ ճանապարհը, բայց դա անցնում էր եօթն անտառների միջով և կտրելով երեք բլուրների շղթաներ: Աւտի երիտասարդ իշխանը սկսաւ վախենալ, որ ինքը երբէք չէր կարող այնտեղը գտնել: «Այս միւս անտառում», ասաց վագրը, «կար մի Ֆակիր, մի սուրբ մուրիկ, որ ունի մի մո-

գական մահիճ և որը կը տանի քեզ ուր որ ցանկանաս երթալ, մի տուրիկ—որը քեզ կը տայ ինչ որ էլ ուզենաս և մի քարէ թաս որ լցոււմ է ջրով ինչքան ուզես: Եթէ դու ունեցար այս բաները, դու կարող ես հեշտութեամբ հասնել իշխանուհի Լաբամին»: «Ես կ'ստանամ նրանց և իմ ձին կը տամ նրանց փոխարէն»: ասաց Ռաջահի սրգին: Նա Ֆակիրին գտաւ անտառի եզր մի ծառի տակ նստած իր մահճի մի կողքին և թասն ու տուրիկ մի ս կողքերին: Երբ նա լսեց թէ իշխանին ինչ էր ուզում, նստեց լուռ երկար ժամանակ խոր մտածմունքի մէջ: «Ինչո՞ւ էք որսնում իշխանուհի Լաբամին» հարցրեց նա վերջապէս: «Ես ուզում եմ նրա հետ պսակուել», ասաց երիտասարդ Ռաջահը: «Թոյլ տուէք ինձ ձեր ձեռքը բռնել և նայել ձեր աչքերի մէջ», ասաց Ֆակիրը: Այսպէս նա բռնեց իշխանի ձեռքը և ուղիղ նայեց նրա աչքերի մէջ և տեսաւ որ նա վստահելի էր: «Ես փոխ կըտամ ձեզ իրերը և խնամք կը տանեմ ձեր ձիուն մինչև որ վերադառնաք: Այժմ ցած մահիճի վրայ պսակէք և ինքներդ ձեզ իշխանուհի Լաբամի երկիրը ցանկացէք»:

Իշխանը վերցրեց թասն ու տուրիկը և

տարածուեց մահճակալի վրայ: «տօր ինձ իշխանուհի Լաբամի երկիր», ասաց նա: Եւ մէկէլ վզըլով եօթն անտառների, ծառերի և բլուրների վրայով, նա տարուեց աւելի պահաս քան մի վայրկեան միջոց և ցած գրուեց Ռաջահ—Սուրջիի թագաւորութեան սահմանների մէջ: Ռաջահ—Սուրջին իշխանուհու հայրն էր, որ խիստ հրամաններ էր տուեր, իր ոչ մի հպատակ օտարականներին գիշերները օթեան չ'տայ: Այնքան շատ իշխաններ էին փնտռել իր աղջկան ամուսնանալու, որ նա ձանձրացել էր միանգամայն նրանց ամեն մէկին ասելով «այ», կամ նրանց անկարելի գործեր կատարել տալով, և նա վճռեց թագաւորութեան սահմանները բոլորովին փակել բոլոր օտարականների առաջ: Աւստի երբ երիտասարդ Ռաջահը, գնաց մի պառոււի խորճիթ և խնդրեց թէ արդեօք կարո՞ղ էր գիշերը մնալ այնտեղ, նա հանդիպեց մերժողական պատասխանի:

«Ռաջան այդ բանը չի թողարարի» ասաց նա: «Լաւ, գոնէ թողէք ինձ, որ իմ մահիճը բերեմ ձեր պարտէզ և այնտեղ քնեմ», պատասխանեց երիտասարդը: «Եւ թողէք ձեր հետ ընթրեմ»: — «Ես ոչինչ չուենիմ ընթրիքի համար բացի բրնձից», պատասխանեց պա-

ռաւը, շարժելով իր գլուխը: Ինչևիցէ երիտասարդ Ռաջան այնպէս թախանձագին խընդրեց նրան թողարարել իրեն ներս գալ որ 'ի վերջոյ պառոււ ճանպայ տուեց և նա դրեց իր տուրիկը նրա սեղանի վրայ: «Տուրիկ», ասաց նա, «ես մի քիչ ուտելու բան եմ ուզում»: Անմիջապէս տուրիկը բացուեց, նրանում կար մի ամենահամեղ ընթրիք, երկու մարդու բաւական՝ ու պառոււը մասնակցեց նրան: Այնտեղ կային կարկանդակներ և պլատուներ և ամեն տեսակ համեղ խորտիկներ դրուած ոսկեղէն պնակների մէջ, իւրաքանչիւր պնակի հետ մի ոսկեղէն դգալ: Վերջացնելուց յետոյ պառոււն՝ ասաց, որ ինքը կ'երթար աղբիւր մի փոքր ջուր բերելու համար: «Մի գնա» ասաց իշխանը: Նա մեղմով զարկեց իր մատներով թասին: «Թ'ան», ասաց նա, «ջուր եմ ուզում»: Թասը լցուեց խկոյն ջրով և իշխանը թափեց մի փայտեայ կոնքի մէջ ու ասաց կնոջ որ լուանայ ոսկեղէն պլանակներն ու դգալները: Դուք կը սեփականացնէիք դրանց եթէ մի առ ժամանակ ևս թողնէիք ինձ ձեզ հետ բնակուելու: Յետոյ նա հրամայեց թասը ջրով լցնել կրկին, որի մէջ լուաց իր ձեռները: «Դուք տեսնում էք», ասաց «իմ թասը տալիս է ինձ այնքան ջուր

որքան ուզում եմ և իմ տուրիկը՝ և ուրիշ ամեն բան ինչ որ ես ուզեմ: Նրանք պատկանում են մի սուրբ Ֆակիրի, և ես կարծեմ որ նա կարող է բարկանալ եթէ դուք դուրս անէք նրա պատկանեալները գիշերը ձեր տընից»: «Մարդկանցից ոմանք կարծում են մի Ֆակիրի բարկութիւնն աւելի ահարկու եղած է քանթէ մի Ռաջահի», նկատեց պառաւը՝ մի երկար դադարից յետոյ: «Եւ կան քսան օսկեայ պնակներ ու քսան օսկեայ զգալիներ», աւելացրեց երիտասարդ Ռաջահը, համազական կերպով: Պառաւը գլուխ տուեց ի նշան շնորհակալութեան և ծածկեց նրանց ամենապատահով կերպով իր անկողնու ներքև և ասաց «դուք կարող էք կենալ, բայց թոյլ չը տաք որ Ռաջահի գինուորները ձեզ բռնեն»: Այս միջոցին գիշերը վրայ հասաւ, բայց ճրագ չը կար տանը, ինքն ու երիտասարդ Ռաջահը նստան մթութեան մէջ: «Ռաջահը թոյլ չէ տալիս որ ճրագներ վառուեն» ասաց պառաւը: «Իր իշխանուհի դուստրը - Լաբամ, յըստում է իր պալատի կտրի վրայ գիշեր ժամանակ և նրա փայլն այնքան է որ լուսաւորում է ամբողջ երկիր»:

Հէնց որ խօսեց թէ չէ մի գեղեցիկ ճառագայթ ընկաւ սենեակն և դուրս ցայտելով

իշխանը տեսաւ՝ որ իշխանուհին ճիշտ որ եկել էր նստելու իր կտրի վրայ: Իր սառիկ էր արծաթեայ շղարշ և իր թուխ ծամերը ծածանւում էին գրեթէ մինչև իր ոտներ: Նա իր գլխի վրայ կամարած և ունէր մի խումբ ադամանդներ, մարգարիտներ և լոյսը, որ նրանից գալիս էր, նման էր արևի, լուսնի և աստղերի ձուլումից առաջացած լոյսին: Նա իր գեղեցկութեամբ խաւարը լուսաւորում է և գիշերը՝ ցերեկի է փոխում» ասաց Ռաջահի որդին: «Միջին Ռաջահը ուղեղ էր, որ ասում էր ես երբէք չէի կշտանայ նրանից»: Կէս գիշերից մի փոքր յետոյ իշխանուհի Լաբամ վայր եկաւ կտրից և գնաց իր սենեակը և նրա բոլոր սպասուհիները գնացին քնելու: Ապա Ռաջահի որդին նստաւ իր մահճակալի վրայ՝ տուրիկը ձեռքում: «Մահճակալ» ասաց նա, «տա՛ր ինձ իշխանուհու ննջարանը»: Այսպէս մահճակալը տարաւ նրան ննջարանը, ուր իշխանուհին պառկած խոր ննջում էր, յետոյ նա շարժեց տուրիկը: «Տուրիկ» ասաց նա, «ես ուզում եմ մի ամենասիրուն շալ, որ նկարակերտ—ասեղնագործուած լինի և՛ կարմիր և՛ օսկեգոյն և՛ կապոյտ»: Տուրիկը տուեց նրան շքեղագարգ շալ, որը նա ձգեց կամացուկ իշխանուհու վրայ: Ապա մահճակալը

կրկին նրան յետ տարաւ պառաւի խրճիթը։
 Հետեւեալ օր տուրիկը տուեց ճաշն ու
 ընթրիքը։ Գիշերն իշխանուհին կրկին դուրս
 եկաւ, կտուրի վրայ նստաւ ու իր սառիճ ըս-
 պիտակ մետաքսից էր՝ ծածկուած տգաման-
 զեայ Թիթեռնիկներով, այնպէս որ իշխանու-
 հին փայլում էր մինչև անգամ առաջուա-
 նից աւելի շքեղափառ։ Կէս գիշերին՝ երբ իշ-
 խանուհին գնաց իր սենեակը, Ռաջահի որ-
 դին հրամայեց իր մահճակալին, որ իրեն տա-
 նի այնտեղ, նա ասաց իր տուրիկին «Տուրիկ,
 ես ուզում եմ մի շատ գեղեցիկ մատանի»։
 Տուրիկը տուեց նրան մի մատանի յակինթնե-
 րով ընդելուզուած և նա բռնեց իշխանու-
 հու ձեռքից երբ նա պառկած ննջում էր ու
 դրան սահեցրեց նրա մատն ի վեր։ Երկրորդ
 րոպէին իշխանուհին զարթնեց և նստաւ իր
 անկողնու մէջ։ «Ի՞նչ էք անում դուք այս-
 տեղ, ո՞վ էք դուք» հարցրեց նա շատ ահա-
 բեկուած նայուած քով։ «Ես այստեղ եմ՝ որովհե-
 տե ես ձեզ սիրում եմ», պատասխանեց երի-
 տասարդ Ռաջահը։ «Մի վախենաք, թոյլ տուէք
 ինձ ձեր ձեռքը բռնեմ և լսեցէք ինչ — որ
 ունեմ ասելու»։ Եւ երբ իշխանուհին տեսաւ
 թէ ինչ մի ազնիւ, գեղեցիկ երիտասարդ էր
 և լսեց որ մի մեծ Ռաջահի որդի էր և որ

դա էր որ նախորդ գիշերը բերել էր շալը,
 նա ասաց որ ինքը կ'ատէր Ռաջահին և Ռա-
 նիին, որ ինքը կը սիրէր նրան ամուսին ու-
 նենալ։ Ապա իշխանուհին կրկին խոր քնեց
 ու իշխանը վերագարձաւ պառաւի խրճիթը։
 Հետեւեալ առաւօտ Ռաջահը մարդ ու-
 ղարկեց նրա յետեից։ «Դուք կ'ամուսնանաք
 իշխանուհու հետ, քանի որ նա ցանկանում
 է» ասաց նա։ «Բայց նախ դուք պէտք է կա-
 տարէք այն գործերը, որ ես ձեզ կը դնեմ։
 Այստեղ կայ ութ լիդր մանանեխի սերմ։ Դուք
 մի օրում ճզմելով դուրս պէտք է հանէք
 դրանց իւղը»։ Երիտասարդ Ռաջահը հեռացաւ
 պալատից շատ վշտացած սրտով։ «Ինչպէս կա-
 րող եմ անել այդ բանը» նա ինքն իրեն հար-
 ցրեց։ «Դա անկարելի է» — «դա միանգամայն
 անկարելի է», ասաց պառաւը երբ նա լսեց
 դրա մասին։ «Միայն մըջիւնների մի բանակ
 կարող է այդ անել»։ Այս նրան յիշեցրեց Մըր-
 ջիւն — Ռաջահին և այդ րոպէին նա մտածեց
 նրա մասին, Մըջիւն — Ռաջահը և իր բոլոր
 մըջիւնները եկան դրան տակից սողոսկելով։
 Իշխանը ցոյց տուեց նրանց մանանեխի սերմի
 ջուալը, որ ինքը պալատից էր բերել։ «Եթէ
 վաղը առաւօտուանից առաջ չըճզմեմ ու դրանց
 իւղը չըհանեմ, ես չեմ կարող ամուսնանալ

իշխանուհի Լաբամի հետ», ասաց նա: «Գընացէք քնելու և դրան թողէք մեզ վրայ», ասաց Մրջիւն — Ռաջահը: Հետևեալ առաւօտեան թողնուած չ'կար մի կաթիլ իւղ մանանեխի սերմերում և իշխանը տարաւ գրանց թագաւորին: «Շատ լաւ» ասաց Ռաջահը «բայց կան մի քանի ուրիշ բաներ էլ»: Երբ մի օր ես գնացել էի դուրս բլուրների վրայ, ես բռնեցի երկու չար ոգիներ և ես նրանց փակել եմ մի վանդակի մէջ:


Ես ուզում եմ նրանց սպանել, որովհետև մի օր նրանք կարող են արձակուել իմ և ժողովրդի մէջ մեծ չարիք գործել: «Եթէ դուք կարող էք սպաննել նրանց, կարող էք ամուսնանալ իշխանուհի Լաբամի հետ»: Երիտասարդ Ռաջահը վերադարձաւ պառաւի խըրճիթը և ասաց նրան ինչ-որ պատահել էր: «Ինչպէս ես կարող եմ կուռել երկու չար ոգիների հետ», ասաց նա: «Ես միայն իմ որսորդական գանակն ունիմ հետս», ուստի նա մեծապէս սրտաբեկուած էր: «Դուք չէք կարող սպաննել չար ոգիները. միայն վագրերի մի զոյգ կարող է այդ անել», պատասխանեց պառաւը: Անմիջապէս իշխանը մտաբերեց իր վագրերը և հէնց որ մտածում էր նրանց վրայ նրանք կանգնեցին իր առաջ: «Իմ կինն

ու ես կը կուռենք չար ոգիների հետ ձեր փոխարէն. տա՛ր մեզ թագաւորի մօտ», ասաց վագրը: Ուստի իշխանը տարաւ նրանց Ռաջահի մօտ և հարցրին թէ կարո՞ղ են կուռել երկու չար ոգիների հետ և Ռաջահը որ անձկանօք ուզում էր՝ որևիցէ միջոցով պրծնել չար ոգիներից՝ ասաց կարող են:


«Այժմ դուք պէտք է ձեր աղջիկը տաք ինձ», ասաց երիտասարդ Ռաջահը: «Միայն մի բան ևս կայ, եթէ դուք կարող էք ածել իմ թմբուկը, դուք կարող էք ամուսնանալ նրա հետ», ասաց թագաւորը: «Ո՛ւր է այն» — «վերևը՝ երկնքում»: «Այդ ամենադժուար գործն է երեքից, ինչպէս կարող եմ երկինք բարձրանալ» հառաչեց իշխանը: Ապա յետ գնաց խրճիթը և ասաց պառաւին «Իմ մըրջիւնները քամեցին իր իւղը ու իմ վագրերը սպաննեցին չար ոգիները, բայց ո՞վ է ածելու իր թմբուկն երկնքում»: «Ապու՛ղ» ասաց պառաւը «եթէ ձեր մահճակալը բերեց ձեզ անցկացնելով եօթն անտառները ծառերի վրայից ու բլուրների շղթաներից՝ չէ՞ կարող տանել ձեզ մի փոքր ճանապարհ դէպի երկինքը», «Ա՛հ, երբէք այդ մասին չը մտածեցի» աղաղակեց Ռաջահի որդին լի ուրախութեամբ: Նա ցած նստաւ իր

փոքրիկ մահճակալի վրայ, որը վեր թռաւ նրա հետ դէպի երկինք, ուր նա զարկեց իր որսորդական դանակի կոթով թմբուկն այնքան բարձրաձայն որ թագաւորը լսեց նրան: «Այդ բոլորը լաւ» ասաց նա՝ երբ իշխանը ցած եկաւ կրկին, «հարսանիքը տեղի կունենայ այնքան շուտ՝ որքան կամենաս»:

Ուստի իշխանը յետ զրկեց մահճակալը, թասն ու տուրիկը ֆակիրին և հարսանիքի հրաւէրքներ էին շրկուում բոլոր զրացի թագաւորութիւններին՝ Ռաջահներին և Ռանիներին: Հարսանիքից յետոյ երիտասարդ Ռաջահը ամուսնացաւ իշխանուհի Լաբամին իր երկիրը իր սեփական տունը և ուր ժողովուրդը իշխանուհուն մկրտեց Լուսասփիւռ իշխանուհի անունով:



Խ Օ Ս Ո Ղ Կ Ի Ի Ա Յ



Ժամանակով կար մի թագաւոր և մի կրիայ: Երկուսն էլ չափազանց շատախօս էին: Թագաւորի անունն էր՝ Բրահմա—Դաթիա, որ Բէնարիսում մի գեղեցիկ պալատի մէջ ապրելով, կառավարում էր բազմամիլիոն ժողովուրդ: Բայց չը նայած որ այնքան հարուստ և մեծ էր, իր ժողովուրդը նրան չէր յարգում և երբ իր սպիտակ և սկեճամուկ կառքով փողոցների միջով անցնում էր, իր առաջից և յետևից վազող հետիոտն սպասաւորներով, ճանապարհի երկու կողմ նստած մուրացկանները ասում էին «Ահաւասիկ գնում է մէկը որ չէ կարողանում իր լեզուն զսպել: Նա խօսում է ու խօսում և ոչ ոք էլ առիթ ունի խօսելու ուր նա կայ: Նա աւելի յիմար բաներ է ասում մի օրում քան թէ հարիզարման յրբ և իցէ իր ամբողջ կեանքում: Մի պատմէք ձեր գաղտնիքները Բրահմա—Դաթիային, եթէ ոչ նրանք ընդ երկար գաղտնիք չ'պիտի լինին»: Հարիզարման որ պետական նախարար էր, տեղեակ էր թէ Բրահմա—Դաթիայի հպատակները ինչեր էին մտածում

Թագաւորի մասին և դա չափազանց վշտացնում էր նրան: Բայց նրա շատախօսուժիւնը բուժելու ճար չը գտաւ և որքան աւելի մըտածեց դրա մասին, այնքան աւելի դժուար երեաց այդ: Կրիան ապրում էր թագաւորի պարտիզի լճակում, որ մինչև անգամ Բրահմա—Դաթթայից աւելի մսլի էր շատախօսուժեան մէջ: Նա խօսում էր թուժակների, կապիկների, ձկները և ճւրջլան թռչունների հետ ամբողջ օրն 'ի բուն, մինչև որ նրանք յոգնում էին նրա խօսելուց: «Ախ ինչքան չարութիւն է անում նա» ասացին ձկները միմիանց, քաշուելով ավի տակ: Նա պատմում է կուռնկներին թէ ուր են մեր գաղտնարանները և նրանք կը գան ու դուրս կ'որսան մեզ ու տելու: Նա ասաց Հերմանին— Ռաջահ—թուժակին, ինչ որ կապիկներն ասում էին նրա պոչի մասին ու մի գժտութիւն ձգեց կապիկների և թուժակների մէջ որ չեն կարող հաշտուել: «Դա մի սոսկալի շատախօս է, աւելի գէշ քան թէ Բրահմա—Դաթթա», ասացին ճւրջլան թռչունները, «կը յուսանք որ մէկը նրան կը հրաւիրի դուրս երբ որ թագաւորը պալատը կը փոխադրի ամարանոց»: Բայց երբ որ տաք օրերն եկան և թագաւորը գնաց իր միւս պալատը— Հիմա-

յալայեան լեռների զառիվայրի վրայ, կրիան թողնուեց լճակում: Հարիզարմանն էլ ուշացու պալատում, մի քանի գործերը վերջացնելու: Թագաւորին ընկերանալուց առաջ, նա մի առաւօտ ճեմելով լճակի մօտ, տեսաւ երկու հաւնաւսներ կամ վայրի բազեր գետնի վրայ իջած, այնտեղի մօտ, ուր կրիան տարածուել էր արևի տաջ տաքանալու: «Ո՞ւր էք գնում դուք» հարցրեց կրիան անմիջապէս: «Մենք գնում ենք մի գեղեցիկ տեղ՝ Հիմալայա աշխարհի, ուր մենք սովոր էինք ապրել: Այնտեղ կուռնում է սսկեայ այր, գեղեցիկ լեռան վրայ»: «Այդ անունը հնչում է շատ լաւ», ասաց կրիան «խնդրեմ ասէք, աւազան ունիք այնտեղ»— «Ո՛չ, բայց մենք ունենք լճեր, գետեր որոնք շատ աւելի լաւ են: Մեզ հետ եկէք և կըտեսնէք»: Այդ՝ կրիան աւազանում ապրելով ձանձրացել էր և որովհետեւ իր լեզուն իր համար բազմաթիւ թշնամիներ էր շինել, բաները անհաճելի եղան նրան թագաւորի պարտեզում: Իեռես նա ի նկատի չէր ունեցել թէ ինչպէս կարող էր երթալ սսկեայ այրը վայրի բազերի հետ: «Եթէ ես կարողանայի թռչել, կը գայի ձեր հետ» ասաց նա, «ճհ, մենք քեզ կը տանենք, մի փայտի երկու ծայրեր մեր կտուցներով

կը պահենք և դու էլ մէջտեղի, կը բռնես քո բերանով, բաց չը թողնես և դու սպահով կրինես բոլորովին:» «Ես կարող եմ հեշտութեամբ այդ աներ» ասաց կրիան, «ոչ, դու չես կարող» ասաց Հարիզարման ինքն իրեն հէնց որ նկատեց ծառերի լետեից, «դա նըշանակում է զսպիր լեզուդ և որը գուքո ծնուելուց ի վեր երբէք չես կարողացել աներ»: Յետոյ նա վերադարձաւ պալատ պարաստուելու և թագաւորին հետևելու դէպի իր ամառնային տան բլուրների մէջ և վայրի բաղերն ևս թռան օդի մէջ կրիան իրենց մէջն առած: «Էլ լետ չը գաս, շատախօս կըրիայ», ասացին ձկնիկները լետեից նայելով: Կրիան շատ էր ցանկանում ասել «Ես մտադիր չեմ էլ վերադառնալ ձեր խղճուկ լճակը, ձեզ թող լինի»: Նա փայտը աւելի պինդ բռնեց և զսպեց իրեն, որովհետև չ'ուզեց կրկին ուղիղ լճակի մէջ գահավիժուել: Նրանք թռան, թռան, թռան ու թռան, դաշտերի, գիւղերի և քաղաքների վրայով և երբ որ վայրի բաղեր, հաւսաւսնեւ կանգ էին առնում ասում էին նրան «Զգուշացիր կրիայ, լեզուդ զսպիր, եթէ ոչ կ'սպանուես»:

Հետևեալ օրն, երբ նրանք թռչում էին՝ դաշտում գործող մի կին ճուտաց, «Երկու վայ-

րի բաղեր տանում են մի կրիայ կախած մի փայտից»: Կրիան այնքան բարկացած էր, որ հէնց ուզում էր ասել «քեզ ինչ ողորմելի կին», բայց մի անգամ ևս զսպեց ինքն իրեն, թէպէտ այնքան կատաղեց, որ փայտը ծամելով մինչև կէսը կտրեց: Հեղհեղ նրանք թռան Բրահմա-Պաթթայի թագաւորի ամառնային պալատի վրայ և ցած քաղաքում մի քանի տղաներ փայտեր նետեցին դէպի վայրի բաղերը: «վայր ձգեցէք այդ պարտ ծեր կրիան» աղաղակեցին նրանք, «մենք ապուր կը շինենք դրանից»: Կրիան չկարողացաւ այլևս լռել, «Ապուր» ունայ նա, «դուք ինքներդ պիտի ապուր դառնաք, շան լակոտներ»: Գոնէ այս էր ուզում ասել նա, բայց հէնց որ իր բերանը բացեց արտասանելու առաջին բառը, նա բաց թողեց փայտը և թրրիկ ցած ընկաւ ուղիղ պալատի մօտի հրապարակում, ուր թագաւորը ու իր պալատականները ճեմում էին: Հարիզարման և միւսները վազեցին վեր վերցնել նրան, բայց նա միանգամայն սատկել էր: «Ո՛նչ դաս կարող ես դուրս բերել սրանից, Հարիզարման» հարցրեց Բրահմա-Պաթթան, «արդեօք կրիան երկնքից ընկել է մեզ համար՝ որպէս սզգարարութիւն» — «ոչ, երկու վայրի բաղեր նրան տանում

էին օգի միջով: Զերդ վեհափառուութեան թույլ-
տըւութեամբ ես կը պատմեմ ձեզ իր պատ-
մութիւնը»: Եւ Հարիգարման ասաց թագա-
ւորին ինչ-որ ինքը տեսել ու լսել էր պալա-
տի պարտէզում:

Թագաւորը լուսթեամբ լսեց նրան ու
մի երկար գագարից լետոյ ասաց, «այս
աղէտը պատահեց ուրեմն, որովհետեւ նա
չէր կարողանում իր լեզուն զսպել»: Նախա-
րարը գլուխը խոնարհեցրեց 'ի նշան հաւա-
նութեան և թագաւորը կրկին լռեց: «Ինչ
թուում է Հարիգարման», ասաց նա 'ի վերջոյ,
«որ ես էլ երբեմն չափազանց շատ եմ խօ-
սում»:

Պալատականները նայեցին Հարիգարմա-
նի վրայ: Նրանք սպասում էին որ նա զօրեղ
կերպով կը հերքի և կ'ասի, որ թագաւորնե-
րը չէին կարող չափազանց շատախօս լինել,
որովհետեւ բոլոր աշխարհ նրանց լսելով բերկ-
րում էր: Բայց Հարիգարման իրեն լուռ պա-
հեց և նայեց ուղիղ թագաւորի երեսին: «Եր-
ջանիկ է այն թագաւորութիւնը ուր թագա-
ւորում է իր սխալներ ճանաչող մի թագա-
ւոր», ասաց նա հանգարտօրէն: «Եւ երջանիկ
է այն թագաւորը, որ ունի այսպիսի հաւատա-
րիմ խորհրդական, ինչպիսին դուք էք», պա-

տասխանեց Բրահմա — Դաթթան: Մենք կը
դնենք մեր պալատում մի ոսկեղէն կրիայ,
լիջեցնելու ինչ սրա ճակատագիրը: Ուստի մի
ոսկեղէն կրիայ զրուեց պալատի մեծ գահլի-
ճի մի սեան վրայ և երբ թագաւորը նայում
էր դրան լիշում էր թէ ինչ էր պատահել
շատախօս կրիային: Նա խնդրեց Հարիգարմա-
նին սովորեցնել իրեն թէ ինչպէս լինէր ա-
ւելի խելօք և աւելի գաղտնապահ և նա սօ-
վորեց լուսթիւն պահել՝ երբ դա հարկաւոր
էր և իր հպատակները նրան այլևս չէին ա-
տում ու արհամարհում:

Ռ Ա Ջ Ա Հ — Չ Ո Ւ Կ Ը

Կային ժամանակով մի Ռաջահ և Ռանի, որոնք ունէին երկու որդի: Անդրանիկը քաջաջ ու տգեղ էր և ունէր միայն մի աչք, այն էլ ճակատի ճիշտ մէջ տեղը: Կրտսերը պարթև էր ու գեղեցիկ և ինքն իրեն ներկայացնում էր որպէս մի արքայորդի: «Նա պիտի լինի մեր թագաժառանգը» սոսց Ռաջահը: Իմ ժողովուրդն երբէք չէր հնազանդուելի մի թգուկ թագաւորի, որ միայն մի աչք ունի: Երբ անդրանիկ եղբայրը լսեց այս՝ շատ բարկացաւ: Ես անդրանիկ որդին եմ և թագաւորութիւնը պէտք է իմը լինի, կամ եթէ ոչ բոլորովին՝ գոնէ պիտի բաժանուի» սոսց նա իր կին Մանթէին: Արդ՝ Մանթէն մի կախարդուհի էր և նա վճռեց ձեռք բերել ամբողջ թագաւորութիւնը ի նպաստ իր ամուսնուն եթէ կարելի էր: Ուստի նա հրաւիրեց երիտասարդ տագրը մի ճաշի, պալատի այն մասում ուր ապրում էր անդրանիկ որդին: «Ընթրիքից յետոյ դուք նստէք նրա հետ գետի վրայ նայող պատշգամբում և ես նրան կը փոխարկեմ մի ձկան: Յետոյ դուք կարող

էք ձգել նրան գետի մէջ և նրա ձայնը կը կտրուի», սոսց նա: Իր ամուսինը համաձայնեց և ընթրիքից յետոյ երկու եղբայրները նստել էին պատշգամբի վրայ: Մանթէն պալատի կտուրը գնաց և երիտասարդ Ռաջահի գլխին մի քիչ փոշի ցանեց: Անմիջապէս նա մի փոքրիկ ձուկ գարձաւ և եղբայրը վերցրեց ու գետի մէջ ձգեց նրան: Իշխանը հագիւ իմացաւ թէ ինչ պատահեց, երբ ինքն իրեն տեսաւ չլօփ — չլօփ ջրի մէջ ընկնելիս, բայց նա շուտով տեսաւ, որ ինքը փոխուել էր ձկան, որովհետև աւելի լաւ էր լողում ջրի տակ, քան թէ երեսը: Նա լողաց, լողաց, լողաց ու լողաց այնքան արագ որքան կարող էր, ազատուելու համար Մանթէի աղբեցութիւնից, որովհետև հաստատ իմացաւ որ կախարդել էր իրեն: Եւ երկու օրուայ մէջ բոլորովին իր հօր թագաւորութեան սահմանից դուրս եկաւ: Սի ուրիշ Ռաջահ էր թագաւորում այս երկրի վրայ և նրա ձկնարսներից մէկը բռնեց իշխանին ուռկանով և տարաւ նրան պալատը Ռանիին ճաշի համար: Սիւս բոլոր ձկները ուռկանում սատկել էին և ձրկնուրը հէնց որ ուզում էր սպանել երիտասարդ Ռաջահ — ձուկին, նոյն ժամին ազախիններից մէկը խնդրեց նրան. «Ես կը գնեմ նր-

րան բաժակում և կը տանեմ Ռանիի սենեակը: Դա կ'զուարճացնի նրան» ասաց նա: Ռանին երեխաներ չ'ուռնէր և երբեմն նա շատ էր վշտանում: Նա միանգամայն ուրախացաւ երբ տեսաւ սիրուն փոքրիկ ձուկը և շուտով մոլուեցաւ նրանով: Երբ նա շատ մեծացաւ որ այլևս չէր տեղաւորոււմ կոնքի մէջ, գրեց նրան մի փայտեայ տաշտի մէջ և կերակրեց նրան խաշած բրնձով, որն երկիցս: «Դա պէտք է կոչուի Մուշի—Ռաջահ—իշխանաձուկն» ասաց նա:

Հետզհետէ Մուշի—Ռաջահն այնքան մեծացաւ որ պարտաւորուեց շինել մի աւազան նրա համար, և ամբողջ օր ջուրը գետից վազում էր նրանում և դրանից դուրս էր գրնում: Թէպէտև իր ջուրն էր միշտ թարմ, բայց Ռանին վախենում էր երբեմն, որ Մուշի—Ռաջահը չէր սիրում աւազանում բանտարկուած մնալ և առաւել ևս կը կամենար լողալ գեղեցիկ վճիտ գետում, որ հոսում էր իր լուսամուտի տակով: «Սլստեղ դուք երջանիկ էք միանգամայն Մուշի—Ռաջահ» հարցրեց նրան իշխանուհին մի օր, որը սիրում էր այնքան շատ, որ նա վերջաւորել էր իր մտքում թողնել նրան երթալ եթէ նա իսկապէս կամենար: «Միանգամայն երջանիկ եմ,

մայր թագուհի» պատասխանեց Մուշի—Ռաջահը, մի րոպէ մտածելուց յետոյ, «ես աւելի և միանգամայն երջանիկ կը լինէի, եթէ դուք կարողանայիք գտնել ինձ համար մի սիրուն փոքրիկ կին: Մանաւանդ այստեղ ցածր միայնակութիւն է» — «Ես շուտով կարող եմ այդ անել», ասաց իշխանուհին, որ նայում էր Զուկ-իշխանի վայր, որպէս իր հարազատ որդու վրայ և երբէք չէր կարող երևակայել թէ որեիցէ մէկը կարող էր ամենափոքրիկ առարկութիւն անել նրա հետ ամուսնանալու: «Այդ է բոլոր ինչ-որ ես ուզում եմ», պատասխանեց Մուշի—Ռաջահը: «Դուք չէիք սիրի գնալ և լսալ գետում» հարցրեց Ռանին փափկութամբ: «Ո՛չ, թագուհի-մայր, իսկապէս ո՛չ»: Իր պատասխանն հիացրեց Ռանիին, բայց նա էլի չիմացաւ, որ նա միայն ըստ երևոյթին մի ձուկ էր և որ այնքան հոգ չէր անում ձկների ընկերութեան համար ինչպէս որ ինքն էլ (Ռանին) չէր փափաքում: «Ես իսկոյն կը գտնեմ քեզ համար կնիկ և՛ շինել կը տամ մի փոքրիկ սենեակ աւազանում նրա համար», խոստացաւ Ռանին: Թէպէտև սենեակը արագօրէն շինուեց՝ բայց կնիկն այնքան էլ հեշտ չգտնուեցաւ: Թէպէտ Մուշի—Ռաջահը կարող է լինել թագու-

հու սիրական բայց ժողովուրդն ասում էր այնուամենայնիւ նա բոլորովին ձկների մի մեծ հրէշ էր և որը միմիայն կին էր ուզում կլանելու համար: Ռանին ուղարկեց պատգամաւորներ հեռու և հեռու, ամէն կողմ և սրոնեց հարուստների և աղքատների մէջ. բայց մինչև անգամ այն ծնողները, որ ութ կամ տասըն աղջիկներ ունէին միւսնայնը պատասխանում էին: «Մենք-չենք կարող մեր երեխաներից մէկը տալ իր Սուչի Ռաջահին»: Ի վերջոյ թագուհին պատրաստեց տալ մի մեծ պարկ ոսկի որ և իցէ հօր, որ կ'ուղարկէր իր աղջիկը Զուկ-իշխանին կնիկ լինելու: Կար մի Ֆակիր-մուրացկան, որը ունէր երկու գուստր և նա բնակուում էր գետի մօտ ոչ հեռու պալատից: «Իուք կարող էք ունենալ իմ անդրանիկ գուստրը», ասաց նա երբ լսեց ոսկու պարկի մատին, «գա ինձ կը հարստացնի և նա այժմեանից սուելի վատ չի լինի», «ո՛ւր է աղջիկդ» հարցրեց թագուհու պատգամաւորը, «լուացք է անում գետի եզերքում»: Նա իմ առաջին կնոջ երեխան է և իր խորթ մայրը նրան է անել տալիս ամեն դժուար գործեր և նրան կշտանալու չափ ուտելիք չէ տալիս»: «Նա իր արժանիքից աւելի եմ տալիս նրան», ասաց Ֆակիրի երկրորդ կինը բարկացած, «էհ,

տարէք նրան, բարի ճանապարհ: Եթէ Զուկ-իշխանը նրան ուտի, մենք նրանից լաւ կը պրծնենք»: Պատգամաւորը թողեց ոսկու պարկը Ֆակիրի մօտ և ցած՝ գետը գնաց, ուր գրտաւ նա մի սիրուն աղջիկ շորեր լուանալիս ջրի եզերքում: Երբ նա լսեց իր յանձնարարութիւնը, դառնապէս արտասուեց և խնդրեց պատգամաւորից սպասել մինչև ինքը-մնաս բարով ասէր իր մի հին բարեկամին, որ բընակուում էր գետեզերքի մի ծակում: Ո՞վ է այս բարեկամը, սրովհետև Ռանին ասաց որ մենք ժամանակ չը կորցնենք» ասաց պատգամաւորը: Իս մի եօթ գլխանի կօպրաւէ (օձ), որին ես ծանօթ եմ իմ փոքրիկ աղջկնութիւնից ի՛վեր», ասաց Լէյլան: Նա վագեց մի փոքրը տեղ գետեզերքով և կօպրան իր եօթը գլուխները ծակից դուրս հանեց: «Մի լար, Լէյլա» ասաց նա, «ես ամեն ինչ գիտեմ: Այս երեք խիճերը վերցրու իմ բնի դրսի կողմից և դիր դրանց քօ սաւիի մէջ: Երբ դու տեսնես Սուչի—Ռաջահի գալը, ձգիր առաջինը նրա վրայ:

Եթէ դա նրան դպչի, նա աւագանի տակ կը սկսւի: Երբ նա կը բարձրանայ երեսը՝ երկրորդով նշան առ նրան և միւսնայն բանը կը պատահի: Նա երրորդ անգամ վերև կը

գայ, ձգելը երրորդ խիճը նրա վրայ և նա կը
 դառնայ մի գեղեցիկ երիտասարդ իշխան»։
 «Ուրեմն իսկապէս նա մի ձուկ չէ», հարցը-
 րեց Լէյլա։ «Ո՛չ, նա մի Ռաջաճի սրգի է, որը
 մի կախարդանքի տակ է, որ կարող ես փա-
 րատել այս կերպով»։ Լէյլան վախեցաւ, որ ինքը
 չէր կարող նրան առնել (Մուշի—Ռաջաճին)
 խիճերով, բայց սրբեց իր արտասուքները և
 գնաց հեռացաւ պատգամաւորներին հետ դէ-
 պի պալատը։ Այստեղ պատրաստուած էր մի
 գեղեցիկ փոքրիկ սենեակ նրա համար աւա-
 զանի ներսի կողմ և Ռանին համբուրեց նրան
 և ասաց որ հէնց ինքն էր Մուշի—Ռաջաճի
 սիրելի փոքրիկ կնիկը։ Ամեն սք շատ մարդա-
 սէր էր գէպի Լէյլան և նա միանգամայն եր-
 ջանիկ կը լինէր, բայց սարսափում էր. աւա-
 զանից, որ լյուած էր մուգ պաղ ջրով և սոս-
 կալի հրէշից որ ապրում էր դրայտատակում։
 Նրանք իջեցրին Լէյլային ցած փոքրիկ սենեա-
 կում, ուր նստեց և երկար ժամանակ սպասեց
 խճերը ձեռքում և որի սիրար արագօրէն
 բաբախում էր։ Վերջապէս ջրի մղումի ձայն
 լսուեց, ալիքները խփում էին դրան, և դուրս
 նայելով Լէյլան տեսաւ մի ահաւոր ձուկ դէ-
 պի ինքը լողալիս իր լայնաբաց բերանով։
 Բացէք դուռը, ես ուզում եմ տեսնել իմ

կնոջ» աղաղակեց Մուշի—Ռաջաճը։ Լէյլան
 դողաց սաքից ցլոււխը, բայց նա բացեց դու-
 ռը և ձգեց առաջին խիճը, որ ուղիղ գնաց
 ցած իր կոկորդը։ Նա սկուեց ինչպէս մի քար,
 բայց մէկ թէ երկու րոպէում կրկին երեսը
 բարձրացաւ, բարկացած շարժելով պոչը ու
 խոշոր ալիքներ գոյացնելով, որ դիպչելով շար-
 ժեց Լէյլայի սենեակը։ Երկրորդ խիճը նշան
 արաւ իր գլխի վրայ և նա երկրորդ անգամ
 սկուեց։ Բայց երրորդ խիճը միայն շոշափեց
 նրա թևի ծայրը, Լէյլան այդ րոպէին այն-
 քան նետարգային էր, որ գրեթէ վրիպեց։ Այս
 անգամ նա չ'սկուեց, այլ փոխուեց մի երի-
 տասարդ գեղեցիկ իշխանի, որը Լէյլային իր
 բազուկների մէջ առաւ և համբուրեց նրան
 քնքշօրէն։ «Շնորհակալ եմ քեզնից, իմ փոք-
 րիկ սիրելիս։ Ի՞նչ բացիր ինձ կապած կախար-
 դանքը», ասաց նա լայժմ մենք կարիք չ'ու-
 նենք այլևս աւազանում ապրելու, այլ կարող
 ենք վայելել արև ու երջանկութիւն բարձր
 դրսի աշխարհում»։ Այսպէս Մուշի—Ռաջաճն
 և Լէյլան դուրս ելան ջրից և երջանկութեամբ
 ապրեցան պալատում իրենց մնացորդ օրե-
 րում։



The first thing I did was to
 go to the bank and see
 how the money was
 getting on. I found
 it was all right
 and I was glad
 to see it. I then
 went to the office
 and saw the
 manager. He told
 me that the
 business was
 going on well
 and that he
 was satisfied
 with the
 results. I then
 went to the
 bank again and
 saw the
 cashier. He
 told me that
 the money was
 all right and
 that he was
 glad to see
 it. I then
 went to the
 office again
 and saw the
 manager. He
 told me that
 the business
 was going on
 well and that
 he was
 satisfied with
 the results.

111

ԳԻՆՆ Ի 2 ՂԻՆՆ

27

0004020

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004020

